ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N 04/11/4312-15 "20" 04 2015

<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ-ի նախագահ
պրն. Է. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան.

Ի պատասխան Ձեր 2015 թվականի ապրիլի 15-ի թիվ 99-հ-4 գրության տեղեկացնում եմ, որ 2014 թվականի նոյեմբերի 18-ին Երևանի Մ. Հերացու ան. պետական բժշկական համալսարանի հետ կնքվել է N 094102-11Բ/Հ համաձայնագիրը /պատճենը կցվում է/:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2014 թվականին ճշտված միջին տարեկան ուսանողների թիվը կազմել է 804, ՀՀ օրենքով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների թիվը՝ 37, մասնակի փոխհատուցում ստացողների թիվը՝ 69-ը:

Հաշվի առնելով, որ 2014 թվականին ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մեկ ուսանողի ծախսը տարեվերջին աճել է տարասկիզբի նկատմամբ, կատարված վերահաշվարկի արդյունքում՝ հիմք ընդունելով ուսանողների միջին տարեկան թվականակի նվազման հետևանքով բուհերին հատկացված միջոցների պակասեցումը և մեկ ուսանողի ծախսի աճի հետևանքով ավելացումը՝ մասնավորապես Երևանի Մ. Հերացու ան. պետական բժշկական համալսարանի հետ 2014 թվականի փետրվարի 3-ին կնքված N 094102-11Բ պայմանագրի գինը թողնվել է անփոփոխ

Հարգանքով՝

Մ. Ղազարյան

Կատ. ֆինանսատնտեսագիտական բաժին
Հեռ. 56-32-60

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N094102-11Բ/Հ

ք. Երևան <<18>> նոյեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս Նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Ղազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝<<Պատվիրատու>>) մի կողմից, և <<Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Մ.Նարիմանյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ <<Կատարող>>) մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) մասին 2014 թվականի փետրվարի 3-ին կնքված թիվ 094102-11Բ պայմանագրի (այսուհետ՝<<Պայմանագիր>>) 4.2 կետը և 2014 թվականի ինն ամիսների համալսարանի սովորողների շարժի հաշվետվությունը՝ Պայմանագրում կատարել փոփոխություններ.

1.1.1. Միջին տարեկան սովորողների թիվը կկազմի 804.

1.1.2. Պայմանագրի գինը ներառում է ճշտված ՀՀ օրենքով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը՝ 36790000 (երեսունվեց միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ և մասնակի փոխհատուցումը՝ 25680500 (քսանհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարան>>> ՊՈԱԿ
ք. Երևան, Վարդանանց 5	ք. Երևան, Կորյունի փ.2
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	Արդշինինվեստբանկ Աղաջան մասնաճյուղ
Հ/հ 900011034130	Հ/հ 2474600015113311
Աշխատակազմի ղեկավար	Ռեկտոր՝
Մ. Ղազարյան	Մ.Նարիմանյան
Կ.Տ	Կ.Տ